ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՆԷՔՍՊՐՏ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ,ԼՈՌՈՒ ՄԱՐԶ,Ք.ՎԱՆԱՁՈՐ
ԹԱՏԵՐԱԿԱՆ ՓՈՂՈՑ 8/49-1

ՀԵՌ. 094 14 84 10
ԷԼ.ՓՈՍՏ shinexprtllc@gmail.com

ООО "ШИНЭКСПРТ"
РА, ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ,
г.ВАНАДЗОР,УЛ.ТАТЕРАКАН 8/49-1

"SHINEXPRT" LLC
8/49-1 TATERAKAN ST., VANADZOR,
LORI REGION, RA

« 24» սեպտեմբերի 2025թ. No ՆՓ-19-09-2025/001

Պետ. լիցենզիա No 17157

Նախագծող՝ «ՀԻԴՐՈԳԱԶԱՐԴՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ

Տնօրեն՝ **Ն. Քոչարյանին**

# ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ

**Տավուշի մարզ, Նոյեմբերյան համայնք ք. Նոյեմբերյան, Մայիսյան փողոց 2/2 հասցեում «ԼՈՖԹ-ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ» երիտասարդական կենտրոնի կառուցման աշխատանքային նախագիծ**

Երաշխավորվում է Տավուշի մարզ, Նոյեմբերյան համայնք ք. Նոյեմբերյան, Մայիսյան փողոց 2/2 հասցեում «ԼՈՖԹ-ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ» երիտասարդական կենտրոնի կառուցման նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: Նախագծի նախահաշվային արժեքը կազմում է 12 400,00 հազար ՀՀ դրամ ներառյալ Ա.Ա.Հ:

( փորձաքննության եզրակացություն առդիր 2 էջ)

«ՇԻՆԷՔՍՊՐՏ» ՍՊԸ տնօրեն՝ Ե. Ասատրյան

Նախագծման հիմք են ծառայել՝

- Նախագծման թույլտվություն

Փորձաքննության է ներկայացվել նախագիծ կազմված 2 ալբոմից

Գիրք 1- Ճարտարապետաշինարարական մաս

**Կոնստրուկտորական մաս**

Տավուշի մարզ, Նոյեմբերյան համայնք, ք Նոյեմբերյան, Մայիսյան փողոց 2/2 հասցեում գտնվող տարածքում <<ԼՈՖԹ>> Հասարակական կազմակերպության պատվերով տարածքի վերահատակագծման նախագծով նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող S=326,48մ² տարածքի S=195.39մ² հատվածի / 11-004-0110-0079 կադաստրային ծածկագրով/տարածք, համագործակցության հուշագիր, առ 25 .12 . *2024թ.* / վերանորոգման և ներքին հարդարման աշխատանքներ, որը քաղաքի համար կծառայի որպես Երիտասարդական ժամանցի՝ կենտրոն։Կենտրոնում կիրականացվի արհեստավարժ երիտասարդների համար աշխատանք՝ ուղղված 13-18 տարեկան պատանիներից և 18-35 տարեկան երիտասարդների անհատական զարգացման և ակտիվ քաղաքացիության ձևավորմանը։ Կրթական, մշակույթային սոցիալական բնույթի հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը և երիտասարդական խնդիրների լուծմանը։
Նախագծով նախատեսվում է իրականացնել բացվածքների իրականացման, միջնորմների կառուցման աշխատանքներ, ինչպես նաև խոհանոցային հատվածի, հանգստի ու ժամանցի սրահների կառուցման, վիտրաժների, նոր դռների և լուսամուտների տեղադրման աշխատանքներ։ Հատակները նախատեսված են կերամագրանիտե սալիկներով , սրահների պատերը՝ ց/ավազե բետոնե բլոկներով , ծեփամածկում, ներկում լատեքսային բարձրորակ ներկով և այլն։ Ճարտարապետաշինարարական մասով շինության կոնստրուկտիվ համակարգի փոփոխություն նախատեսված չէ, շինության բարձրությունը մնում է անփոփոխ։ Նախագիծը կատարված է համաձայն ՀՀ-ում գործող նորմերի ու կանոնների։
Աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվող բոլոր նյութերը պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող ստանդարտներին և նորմատիվային փաստաթղթերի պահանջներին, ինչպես նաև տվյալ ապրանքների որակի չափանիշների/սերտիֆիկատների/ պահանջներին։

**Նախահաշիվ**

Նախահաշիվը կազմված է օրենսդրությամբ սահմանված կարգի համապատասխան։
Նախահաշիվը կազմված է ներկայացված ծավալների հիման վրա։
Կոնստրուկտիվ էլեմենտների նյութածախսերը վերցված են 1984 թվի նորմերով։
Հիմնական աշխատավարձը եւ մեքենաների շահագործումը գնահատված են 1984 թվի գներով եւ վերահաշվարկված 2025թ. գներով, համաձայն ռուբլուց դրամի անցման գործակիցներով՝

| | |
|---|---|
| աշխատավարձի մասով | 2478,61 |
| մեքենաների շահագործման մասով | 3018,17 |

Ռուբլուց դրամի անցման գործակիցը հաշվարկված է աշխատողների ամսական 268,309 հազ. դրամ միջին աշխատավարձի չափով։
Նյութերի արժեքները վերցված են ՀՀ ֆինանսների նախարարության՝կողմից հրատարակված
2025 թվականի N6 ինֆորմացիոն տեղեկագրից ավելացրած `

| | |
|---|---|
| Այլ նյութեր- | 5% |
| Պահեստային ծախսեր- | 2% |
| Տրանսպորտային ծախսեր- | 13,20% |

**ՀՀ Տավուշի մարզ Նոյեմբերյան քաղաքում ԼՈՖԹ-ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ երիտասարդական կենտրոնի կառուցում**

| | | |
|---|---|---|
| **Նախահաշվային ընդհանուր արժեքը կազմում է** | **12 400,00** | **<u>հազ. դրամ</u>** |
| **այդ թվում ԱԱՀ** | **2 066,67** | **<u>հազ. դրամ</u>** |

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Շինէքսպերտ» ՍՊԸ-ն նշում է, որ՝

1. Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:
2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:
3. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կամզակերպության հետ համատեղ:

Ելնելով վերը նշվածից **«Շինէքսպերտ»** ՍՊԸ-ի փորձաքննությունը **<u>ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է</u>**, Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և

**<u>ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՄԱՆ</u>**

Գլխավոր ինժեներ՝ Ա. Զալյան

Փորձագետ՝ Գ. Գուլանյան